Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ», «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆ-ՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայումս ոստիկանության զորքերի խնդիրները, գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքներն առավելապես կանոնակարգված են «Ոստիկանության զորքերի մասին» օրենքով:

Այնուամենայնիվ, «Պաշտպանության մասին» օրենքը ոստիկանության զորքերը դասում է «այլ զորքերի» թվին, ինչի ուժով ոստիկանության զորքերի ղեկավարման և կառավարման գործառույթները խաղաղ ժամանակ օրենքով սահմանված կարգով իրականացնում է լիազոր մարմինը՝ ներքին գործերի նախարարությունը, իսկ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ ոստիկանության զորքերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո:

Այլ զորքերի մեջ ներառվելու հետևանքով ոստիկանության զորքերի վրա տարածվում են նաև ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի և ՀՀ զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի դրույթները:

Այս ամենից հետևում է, որ ինչպես ոստիկանության զորքերը, այնպես էլ դրանց ծառայողներն ունեն երկակի կարգավիճակ: Բացի այդ, այս ծառայությանը բնորոշ է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին անվտանգության գործառույթների զուգակցումը, ինչը չի բխում ոստիկանության ընդհանուր խնդիրներից:

Ուստի, նշված խնդիրները լուծելու նպատակով, մշակվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի նախագիծը, որով առաջարկվող իրավակարգավորումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնել նաև «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հավաքների ազատության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին», «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծով սահմանվում են ոստիկանության գվարդիայի կարգավիճակը, կառուցվածքը, խնդիրներն ու գործառույթները, գվարդիայի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ նրանց կողմից ուժային միջոցներ կիրառելու դեպքերը, հիմքերը և համաչափության պայմանները, ինչպես նաև՝ ոստիկանության գվարդիայի ծառայողների պատրաստման և վերապատրաստման առանձնահատկությունները:

Օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումները, մասնավորապես, հանգում են

հետևյալին՝

1. Ոստիկանության գվարդիայի նոր կարգավիճակի սահմանումը: Դրա նպատակը, նախ և առաջ, այն է, որպեսզի ոստիկանության այս ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի վերափոխման արդյունքում ոստիկանության գվարդիան գործի բացառապես քաղաքացիական կառավարման և խորհրդարանական վերահսկողության ներքո: Արդյունքում, ոստիկանության գվարդիայի ձևավորման, գործունեության կարգը, ինչպես նաև գվարդիայում իրականացվող ծառայության առանձնահատկությունները կարգավորվելու են բացառապես ոստիկանությանը վերաբերող օրենսդրությամբ, և գվարդիան այլևս չի ներառվելու «այլ զորքեր» օրենսդրական բնորոշման մեջ: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ նոր օրենքով ոստիկանության գվարդիային վերապահվելու երկրի պաշտպանության ոլորտի այնպիսի գործառույթներ, որոնք բխում են ոստիկանության խնդիրներից և արդյունավետ կերպով կարող են իրականացվել նոր ձևավորվող ծառայության կողմից: Ոստիկանության գվարդիան լինելու է ՀՀ ոստիկանության կառուցվածքային միավոր՝ իր համապատասխան ստորաբաժանումներով:

2. Ոստիկանության գվարդիայի կառուցվածքի որոշակիացումը: Ոստիկանության գվարդիայի կառուցվածքում նախատեսվում է ներառել ներկայիս ոստիկանության զորքերը, ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը, ճանապարհային ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումը, ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում գործող հատուկ նշանակության ստորաբաժանումները, ինչպես նաև՝ քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումները: Ոստիկանության գվարդիան կունենա անմիջական ենթակայության տարածքային ստորաբաժանումներ առնվազն ՀՀ երեք մարզերում (Լոռի, Շիրակ, Սյունիք, որոնք անհրաժեշտության դեպքում կսպասարկեն նաև հարակից մարզերը), ինչպես նաև՝ պետական պահպանության և քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումներ (Երևանում և մարզերում):

3. Ոստիկանության գվարդիայի կողմից իրականացվող անմիջական գործառույթների վերանայումը և հստակեցումը: Նոր մոդելի պայմաններում նախատեսվում է օրենսդրորեն ոստիկանության գվարդիային վերապահել գործունեության հետևյալ ուղղությունները՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության

ապահովումը,

2) ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը,

3) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը,

4) քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը,

5) ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը:

Հարկ է նշել, որ գործունեության նշված ուղղություններով իրականացվող գործառույթները մանրամասնեցված են «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծում:

4. Ոստիկանության գվարդիայի ծառայողների կողմից ուժային միջոցների՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի և մարտական տեխնիկայի գործադրման դեպքերի, հիմքերի և համաչափության պայմանների մանրամասն և հստակ կանոնակարգումը: Այս համատեքստում, հաշվի առնելով ուժային միջոցների կիրառման իրավաչափության և համաչափության կարևորությունը, նախագծով սպառիչ թվարկվում են կիրառման ենթակա ուժային միջոցների տեսակները, ներկայացվում են դրանց կիրառման դեպքերը կամ իրավիճակները, նախատեսված են ուժային միջոցների ընտրության ընդհանուր չափանիշները և նրանցից յուրաքանչյուրի կիրառման հատուկ պայմանները:

Բացի այդ, ամրագրվել են ուժային միջոցներ կիրառելու կապակցությամբ ոստիկանությանգվարդիայի ծառայողի պարտականություններն ու իրավունքները, ինչպես նաև՝ ուժային միջոցների ներգործությանը ենթարկվող կամ ենթարկված անձանց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքները:

5. Ոստիկանության գվարդիայի ծառայողների պատարաստման և վերապատրաստման հիմնական ուղղությունները սահմանելը:

Ոստիկանության գվարդիայի ծառայողների պատրաստման և վերապատրաստման

հիմնական ուղղություններն ուղղակիորեն պայմանավորված են լինելու ոստիկանական այս կառույցի գործառույթներով և դրա ծառայողների լիազորությունների բովանդակությամբ: Ըստ այդմ, ոստիկանության գվարդիայի ծառայողները պատրաստության և վերապատրաստման շրջանակներում, ի թիվս այլնի, պետք է տիրապետեն զանգվածային միջոցառումների ընթացքում քաղաքացիների հետ շփվելու էթիկական սկզբունքներին, հոգեբանական կապ հաստատելու և բանակցություններ վարելու հմտություններին, մարդու հիմնարար, այդ թվում՝ հատկապես իրենց գործառույթների իրականացմանն անմիջականորեն առնչվող իրավունքների բովանդակությանը և դրանց իրավաչափ սահմանափակման հիմքերին, ուժային միջոցների կիրառման և սահմանափակումների վերաբերյալ եվրոպական սկզբունքներին և չափանիշներին, զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պատշաճ պահպանություն իրականացնելու մարտավարական հմտություններին, ուժի և հատուկ միջոցների համաչափ և արհեստավարժ կիրառման հմտություններին, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալում, դրան ուղեկցող անձնական խուզարկություն կատարելու, ինչպես նաև համապատասխան արձանագրություններ կազմելու կարողություններին, դեպքի վայրի պահպանության ապահովման վարույթային և կազմակերպական առանձնահատկություններին:

Բացի այդ, նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1. «Պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նշված օրենքի հասկացությունների «այլ զորքերի» սահմանումից հանել «ոստիկանության զորքեր»-ը,

2. «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ապահովել քաղաքացիների՝ հավաքներ անցկացնելու իրավունքի առավել արդյունավետ իրացումը, ինչպես նաև՝ նվազեցնել հավաքների մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման ռիսկերը: Մասնավորապես, նախատեսվում է՝

1) հավաքների վերաբերյալ իրազեկումը Լիազոր մարմնին կարող է ներկայացվել ոչ ուշ, քան հավաքի սկզբից 72 ժամ առաջ, գործող՝ հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ իրազեկելու պահանջի փոխարեն,

2) գործող օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Լիազոր մարմինն իրազեկումը քննարկում է ըստ իրազեկումների մուտքագրման հերթականության: Եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 30 օրից մինչև 14 օր առաջ, ապա լիազոր մարմինն իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 5 օրվա ընթացքում, իսկ եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 13 օրից մինչև 7 օր առաջ, ապա լիազոր մարմինը իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 48 ժամվա ընթացքում: Եթե քննարկման ժամկետն ավարտվում է ոչ աշխատանքային օրը, ապա դա երկարաձգվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը: Նախագծով հանվում է «30 օրից» բառերը՝ հնարավորություն տալով հավաքի կազմակերպչի կողմից հավաքի վերաբերյալ իրազեկումը ներկայացնել հավաքի անցկացման օրվան նախորդող մինչև 14 օր առաջ, որի դեպքում իրազեկումը կքննարկվի այն մուտքագրվելու պահից 5 օրվա ընթացքում: Միաժամանակ, եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 13 օրից մինչև **հավաքի սկզբից 72 ժամ** առաջ, ապա լիազոր մարմինը իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից **2 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հավաքի սկզբից 48 ժամ առաջ**,

3) որպես սահմանափակում՝ հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումը, գործող օրենքի համաձայն, ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, **եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ**: Հակառակ դեպքում, ավելի ուշ իրազեկված հավաքի նկատմամբ կիրառվում են նշված օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը: Նախագծով հանվում է մասնակիցների բախման անմիջական վտանգի վերաբերյալ դրույթը, ինչպես նաև նշված հիմքով Լիազոր մարմնի կողմից հավաքների անցկացման վերաբերյալ սահմանափակումների կիրառման լիազորությունը,

4) հավաքի անցկացումը արգելելու հիմքերից հանվում է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերի, դատարանների կամ քրեակատարողական հիմնարկների մոտ հավաքների անցկացման վերաբերյալ դրույթը,

5) հանվում է ինքնաբուխ և շտապ հավաքների համար գործող օրենքով նախատեսված՝ մինչև վեց ժամ տևողության սահմանափակումը,

6) գործող օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, **եթե այլ կերպ հնարավոր չէ** կանխել այլ անձանց

հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը: Նախագծով նշված լիազորությունը ոստիկանությունը կարող է իրականացնել, եթե **առավել մեղմ միջոցներով հնարավոր չի լինում** կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

3. «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով նշված օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված ոստիկանության պաշտոնների դասակարգումից հանվում է ոստիկանության զորքերի հրամանատար-ոստիկանության պետի տեղակալի պաշտոնը: Միաժամանակ, հաշվի առնելով այդ հանգամանքը, անհրաժեշտություն է առաջանում ոստիկանության բարձրագույն կոչումներ շնորհելուն վերաբերող 5.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ դրանում չընդգրկելով ոստիկանության զորքերի հրամանատար-ոստիկանության պետի տեղակալին կոչում շնորհելու հետ կապված իրավակարգավորումները:

Վերը նշվածով պայմանավորված՝ փոփոխություններ են կատարվում նաև օրենքի 13-րդ, 13.1-ին և 47-րդ հոդվածներում՝ ոստիկանության զորքերի հրամանատարին վերաբերող համապատասխան իրավակարգավորումները նախատեսելով ոստիկանության գվարդիայի հրամանատարի համար:

4. «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով նշված օրենքի 6-րդ հոդվածում կատարվում է համապատասխան փոփոխություն, որով Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստմանը ներգրավվող անձանց շրջանակից հանվում են ոստիկանության զորքերի ծառայողները: Լրացվում է նոր բովանդակությամբ 5.2-րդ հոդված, որով սահմանվում են ոստիկանության կողմից հարկադրանք կիրառելու սկզբունքները:

Ոստիկանության ծառայողի կողմից ուժային միջոցների գործադրման իրավաչափության ընդհանուր պայմանները և այլ կարգավորումները համապատասխանեցվում է «Ոստիկանությա գվարդիայի մասին» օրենքի նախագծի համապատասխան հոդվածներով նախատեսված նորմերին:

Բացի այդ, օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում կատարվում է լրացում, որով ոստիկանության գվարդիայի ծառայողների սոցիալական ապահովության հարցերը կկարգավորվեն զինծառայողների սոցիալական ապահովության երաշխիքները սահմանող այլ

նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ արդյունքում ոստիկանության գվարդիայի ծառայողների համար պահպանելով զինծառայողների սոցիալական բոլոր երաշխիքները:

5. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նշված օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «ե.1)» կետից հետո կատարվում է լրացում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության, առողջապահության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառների պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները, ի թիվս այլ միջոցառումների, կիրառվելու են նաև զինված ուժերի և այլ զորքերի ստորաբաժանումների, ռազմական և այլ տեխնիկայի, ինչպես նաև բնակչության զանգվածային տեղաշարժի երթուղիների պահպանության և պաշտպանության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց ուղեկցման դեպքում:

Լրացվում է նոր բովանդակությամբ 2.1-ին կետ, որով զինված ուժերի գերագույն հրամանատարը բացառիկ դեպքերում ոստիկանության գվարդիային կարող է տալ ռազմական դրությամբ պայմանավորված առաջադրանքներ:

6. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նոր խմբագրությամբ է շարադրվում նշված օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, որով զինված ուժերի զինծառայողների կողից ուժային միջոցներ պետք գործադրվեն «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով սահմանված ուժային միջոցների գործադրման իրավաչափության պայմաններին համապատասխան, քանի որ «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվի նաև «Ոստիկանության զորքերի մասին» օրենքը,

7. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով գործող օրենքի 17.2-րդ հոդվածի 3-րդ մասից հանվում է «, ոստիկանության զորքերի» բառերը,

8. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով գործող օրենքի 12-րդ հոդվածում «ոստիկանության

զորքերում» բառերը փոխարինվում է «ներքին գործերի նախարարության ոստիկանության գվարդիայում» բառերով,

9. «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով գործող օրենքի 7-րդ հոդվածից հանվում է «, Ոստիկանության զորքերի,» բառերը,

10. «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով գործող օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանվում է «, ոստիկանության զորքերի զինծառայողները» բառերը: Միաժամանակ, կատարվում են տեխնիկական շտկումներ: Մասնավորապես, 24-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանվում են «կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ 2-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը փոխարինվում են «ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության» բառերով,

11. **«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծով գործող օրենքի 56.1-րդ հոդվածի 11-րդ մասից հանվում են «, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ» բառերը և երկրորդ նախադասությունը՝ համապատասխանեցնելով «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի տրամաբանությանը,

12. **«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** գործող օրենքի 39-րդ հոդվածի 11-րդ մասից հանվում են «, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ» բառերը և երկրորդ նախադասությունը՝ համապատասխանեցնելով «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի տրամաբանությանը,

13. **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծով ուժը կորցրած են ճանաչվում Օրենսգրքի 180.1-ին հոդվածի 3-րդ և 9-րդ մասերը, որոնցով համապատասխանաբար պատասխանատվություն է նախատեսվում հավաքը Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերի,

դատարանների կամ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա չանցկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կամ ոստիկանության ներկայացուցչի պահանջներին չենթարկվելու, ինչպես նաև՝ ինքնաբուխ և շտապ հավաքների անցկացման համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետը ավելի քան 1 ժամով գերազանցելու համար՝ համապատասխանեցնելով «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի տրամաբանությանը: Բացի այդ, Օրենսգրքի 182-րդ հոդվածի վերնագրում և տեքստում հանվում են «զորքերի զինծառայողի կամ ոստիկանության» բառերը,

14. **«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»** օրենքի նախագծով գործող օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում Վարչական դատարան դիմելու և հայցադիմումների քննության ժամկետներում կատավում են համապատասխան փոփոխություններ՝ համապատասխանեցնելով «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի տրամաբանությանը:

15. **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծով հիմնականում կատարվել են տեխնիկական շտկումներ: Մասնավորապես, 3-րդ հոդվածում որպես զինվորական ծառայության տեսակ նշված ներքին գործերի նախարարությունը փոխարինվեց ոստիկանություն և պետական պահպանության մարմիններ բառերով: Նմանատիպ փոփոխություններ կատարվեցին նաև 9-րդ և 72-րդ հոդվածներում: Ինչպես նաև կարգավորվել են ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայողների սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները:

3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի փաթեթը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման 1-ին հավելվածի «Ոստիկանություն» բաժնի 2-րդ նպատակից՝ Ոստիկանության զորքերի կարգավիճակի վերանայում, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորում, Ոստիկանության զորքերի

ծառայության կազմակերպաիրավական նոր ձևի սահմանում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 638-Լ որոշման 2-րդ հավելվածի 4-րդ ուղղությունից:

Միաժամանակ, Նախագծերի փաթեթը բխում է ՀՀ ներքին գործերի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 54-Լ հրամանով հաստատված «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի հայեցակարգից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագիծը մշակվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակներում ներգրավված փորձագիտական խմբի և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում կստեղծվի զուտ ոստիկանական ծառայություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող նոր սպառազինությամբ ու վերապատրաստված անձնակազմով, որին կվերապահվեն հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, պետական շենքերի և կարևորագույն օբյեկտների պահպանության, պետական արարողակարգով նախատեսված պատվիրակությունների ուղեկցման, ինչպես նաև ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման ու այլ գործառույթներ:

Միաժամանակ, նախագծերի ընդունումը կնպաստի քաղաքացիների՝ հավաքներ անցկացնելու իրավունքի առավել արդյունավետ իրացմանը, ինչպես նաև հավաքների մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման ռիսկերի չեզոքացմանը:

ՀՀ ներքին գործերի նախարարություն